

L472


1834

1479

3  
580

④

0



U. S. L. P. T.

396:34  
3-35

ԱՏՎԱՐԴԻՆ է 1961 թ.

## ԿԱՆԱՆՑ ՀԵՏՐՈՂԱԿԱՆ

# ԻՐԱՀՈՒՆՔԸ

## Թարգմ. ԱՐՏԱԿԱԶՄ



ՀԱՅՈՒՄ 1772 թ 831


P H S L H Q

Էլէքտրաշաբժ տպարան. Ընկ. «Հերմես» Մադաթ. փող. № 5.

1906

(212)

A  $\frac{\pi}{12S12}$



ԿԱՆԱՆՑ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱԻՈՒԹՅ

Ընդհանուր, հաւասար և գաղտնի ձայնութիւնը ժողովրդական ներկայացուցիչ ընտրելու համար համեմատաբար շատ վաղուց չէ, որ գործադրուում է Արևմտեան Եւրոպայում և Ամերիկայում, այն էլ ոչ բոլոր պետութիւնների մէջ։ Առաջ այլ կերպ էր։ Հասարակութեան հարուստ և կարողութեան տէր դասկարգերը—կալուածատէրեր, վաճառականներ, գործարանատէրեր և այլ աստիճանաւոր անձինք երկար ժամանակ սեպհականազուրկներին և աշխատաւորներին թոյլ չէին տալիս ընտրողական պայքարին մասնակցելու։ Ժողովրդական ներկայացուցիչ ընտրութիւններին ձայն տալ—նշանակում է, թէկուզ կողմանակի կերպով, մասնակցել պետութիւնը կառավարելուն, այդ նշանակում է սովորել գիտակցօրէնքնահատել ամեն մի պետական գործ կամ գործչի։

Երբ դեռ սորանից հարիւր տարի առաջ սկսաւ զարգանալ խոշոր արդիւնաբերութիւնը, երբ սունկի նման սկսան բուանել խոշոր արհեստանոցներ, գործարաններ, երբ սկսաւ բազմանալ գործարանային

վարձու աշխատաւորների թիւը, երբ խոշոր արդիւնաբերութեան և մեծ քաղաքներում հաւաքւող արդիւնաբերող վարձու բանւորների դասակարգի հետ միասին սկսաւ զօրեղանալ նաև վերջինիս համերաշխութիւնը, գիտակցութիւնը և վճռականութիւնը,— այն ժամանակ բոլոր երկրներում ընդհանուր ընտրողական իրաւունքի համար վճռական կը-ոիւ սկսուեց։ Վարձու բանվորների դրօշի տակ սկսան հաւաքուել բոլոր աշխատաւորները և չունեոր մարդիկ, և գիւղացիք, և արհեստաւորներ, և փոքր խանութատէրեր և չքաւոր ինտելիգէնտ դասակարգը։

Բոլորն էլ պահանջում էին ընդհանուր ընտրողական իրաւունք։

Արևմտեան Եւրոպայում և Ամերիկայում այդ կոփւն արդէն մօտեցել է իր վախճանին։

Ընդհանուր ընտրողական իրաւունքը պետութիւնների մեծ մասի մէջ չինովակիների և բուժուազիայի դէմ մղած կռուկց յետոյ հաստատապէս փոխարինեց նախկին սեպհականատէրունեոր դասակարգի մենաշնորհ ձայնտւութիւնը։

Այսպէս մենք տեսնում ենք, որ վաղուց չէ, ինչ ընդհանուր ձայնտւութիւնը ծնունդ առաւ և ուժեղացաւ։ Նա ծնուեց ամբողջ ազգաբնակութեան մը-դած մի տաք կռուում։ Ուստի և մեզ համար այնքան էլ զարմանալի չի լինի, եթէ մի քանի պետութիւնների մէջ, ուր ընդհանուր ձայնտւութիւնը արդէն

ընդունուած է, շեղումների և սահմանափակումների հանդիպենք։ Զէ որ ընդհանուր ձայնտութիւնը ձեռք է բերուել մօտիկ անցեալում և ուժով է իրականացրած։ Հասկանալի է, որտեղ հնարաւոր է եղել, ընդհանուր ձայնտութիւնը աղճատուած և կիսով չափ է հասաւատուել, իսկ այդ կերպ վարուել կարելի էր ազգարնակութեան այն մասի վերաբերմամբ, որ թոյլ և անընդունակ էր իր պահանջների համար կռուելու ովք գուրկ էր քաղաքական և դասակարգային դիտակցութիւնից. այդպիսի մոռացուած, հասարակական գործերում անփորձ կամ քիչ փորձուած մարդոց իրաւունքը արհամարհուեց ամբողջ Արևմուտքում։

Այդ ժամանակից յիշեալ իրաւունքից զրկուած մարդիկ էլ սկսան համախմբուել, կուռ շարքեր կազմել, պահանջել իրանց իրաւունքները նոյնպէս և նոցա համար քաջարար կռուել։

Մեր խօսքը կանանց մասին է, որոնք Եւրոպայի և Ամերիկայի բնակչութեան ամբողջ կէսն են կազմում, և որոնք համարեա ումեն տեղ, միայն Ամերիկայի և Աւստրալիայի մի քանի պետութիւնների բացառութեամբ, զրկուած էին ձայնտութեան, ժողովրդական ներկայացուցիչներ ընտրելու և ընտրուելու իրաւունքից։ Երկար տարիներ, համարեա մինչև ժամանակակից գործարանային խոշոր արդիւնաբերութեան բարգաւաճումն, ընդհանրապէս կա-

նայք տնային հոգսերով և մանուկների կրթութեամբ էին պարապում. տնային նեղ շրջանակում՝ փակուած, տնտեսութեամբ ծանրաբեռնուած, զուրկուրիշ որևիցէ արհեստներից, աշխատանքների և շահերի շփումից, նոքա կամովին կամ ակամայից իրենց ամուսիններին էին ենթարկուած, որոնք իրանցից աշխատանքի ուժով գերազանց էին:

Այդպիսի պայմաններում կինը մի տնային ստըրկուհի էր, որն ընտանիքի համար շոր էր կարուժ, պատրաստում անհրաժեշտ զգեստը և կօշիկներ, նաև հոգում աւելի անհրաժեշտը — կերակուրի համար: Կինը իւր տէր — ամուսնուց այս տաժանակիր աշխատանքի համար միայն ապրուստ էր ստանում, և նորան վիճակուած էր պարոն ամուսնուն հլու հպատակ լինել: Իսկ նրա աշխատանքը իրօք որ տաժանակիր էր:

Մինչ այժմուայ հսկայական գործարանների և արհեստանոցների հաստատումը, որոնք հեշտութեամբ և շատ շուտ պատրաստում են ամեն տեսակ շիթ, մահուդ, մում, սապոն և տնային ուրիշ շատ կարևոր առարկաներ, այդ բոլորը պատրաստում էին ընտանիքներում, և նոյն իսկ այժմ էլ մի քանի յետ ընկած գիւղերում, պատրաստում են, ու այդ բոլորը կնոջ ձեռքով, որը այնքան էր ծանրաբեռնուած հոգսերով, որ ֆիզիքապէս բթանում էր: Էլ Երբ պիտի նա իւր իրաւունքների և ամենազօր տղամարդու գէմ կոռւե-

լու մասին մտածէր, քանի որ ընտանիքից դուրս նա  
ոչ մի պարապմունք չէր գտնում, հեռու էր պահ-  
ում ամեն տեսակի արդիւնաբերող աշխատանքից,  
քանի որ իրեն կերակրել և ապահովել կարող էր  
միայն ամբողջապէս մարդուն ենթարկուելով և նորա ու  
ընտանիքի համար յարատե աշխատանքի դատապարտ-  
ելով:

Շատ տարիներ են անցել այդ ժամանակից.  
փոխուեցին արդիւնաբերութեան, ինչպէս նաև  
ընտանեկան պայմանները: Ամերիկայում և Եւ-  
րոպայում արագ աճող գործարաններն ու արհես-  
տանոցները ուշադրութիւն դարձրին կանանց աշխա-  
տանքին, որ աւելի աժան և հնազանդող էր, քան տը-  
ղամարդոցը: Մեքենաները հեշտացրին բանուորի աշ-  
խատանքը: Մեքենան գործածելիս բանուորից որոշ  
վարպետութիւն կամ ոյժ չէ պահանջւում, ուրեմն  
նշանակում է՝ մեքենան վարելու համար էլ կանացի  
թոյլ ձեռքը և նոյն իսկ երեխայի քնքոյշ թաթիկ-  
ներն էլ բաւական են: Կապիտալը գրաւեց կնոջը և  
ծառայեցրեց իրեն, հրապուրեց աւելի լաւ վաստակով  
և աւելի հեշտ աշխատանքով, որովհետեւ տնային  
սորկուհու տաժանակիր աշխատանքի հետ համեմատած,  
նոյն իսկ գործարանի և արհեստանոցի աշխատանքը  
կնոջը արքայութիւն էր թւում: Միւս կողմից հէնց  
նոյն գործարանն էլ քչացնում էր բանուոր տղամար-  
դու աշխատավարձը:

Նախկին անկախ գիւղացին կամ արհեստաւորը կարողանում էր դեռ ևս միայն իւր եկամուտով կերակրել գերդաստանը։ Այժմ նա գործարան ընկաւ իրեւ վարձու բանուոր, և նրա վաստակը շաա քիչ էր այդ բանի համար։ Այժմ նրա կինը և աղջիկները նրամանապէս պէտք է ծառայէին նոյն կապիտալին, որպէսզի իրենց վաստակով լրացնէին տնային ամենակարեւոր ծախքերի փողը։ Բացի այդ կնոջ տնային աշխատանքն էլ քշացաւ, սապոնը, մոմը, մաճուդ ու չիթը և այլ իրերը, որ առաջ բոլորը տանն էին պատրաստում, սկսան գնել գործարանի պատրաստած ապրանքներից, որովհետև այդ ապրանքներն այնքան արժանացան, որ գինը տան հում նիւթի գնին հաւասարուեց։

Այդպիսով ամենուրեք արդիւնաբերութեան նոր կարգերը մղում էին միայն դէպի մի բան, դուրս բերելով կնոջը տնային հոգսերի նեղ շրջանակներից դէպի լայն աշխարհը, մեծ գործարանը, դէպի կալուածատէրերի տնտեսութիւնը, դէպի քաղաքային ահազին խանութները։ Կանայք աւելի ու աւելի դարձան գործարանային և գիւղական բանուորուհիներ, վարձուելով կալուածատէրերից կամ մի որևէ է վաշխառու մարդուց իրեւ գործակատարուհի, խանութներում ապրանք վաճառող, բանկերի և առևտրական գրասենեակների ծառայողներ, իսկ միջին դասակարգի կանայք — փոքր աստիճանաւորների, ոչ հարուստ վաճառա-

կանների, բժիշկների, փաստաբանների, կիսաքանդ կալուածատէրերի և գործարանատէրերի աղջիկներն էր — ձեռք բերին զանազան ազատ զբաղմունքներ, դարձան բժշկուհիներ, հիւանդապահներ, վարժուհիներ, պաշտօնեաներ և այլն:

Այս ոչ հարուստ, բայց և ոչ աղքատ խաւերում կեանքը տարէց-տարի ծանրանում էր, տղամարդիկ չէին կարողանում մի այնպիսի վաստակ ունենալ, որով կարողանային քիչ թէ շատ ապահովել ընտանիքը: Այդ բոլոր միջին և փոքր բուրժուաները սկսան ձեռընպահ մնալ ամուսնութիւնից կամ ամուսնանում էին աւելի մեծ հասակում: Իսկ նոյն դասակարգի կանայք չամուսնանալով պատճառ էին դառնում նորցա անապահով դրութեանը և ապրելու միջոցներից զրկուելուն:

Այսուամենայնիւ այդ բոլորը նրանց մղում էր տանից դէպի շուկայ, ուր վաճառւում և գնուում էր բանուորի աշխատանքը, որտեղ այդ աղջիկները կամ անապահով ամուսնացած կանայք իրենց համար որևէ աշխատանք կարող էին գտնել, որնէ զին և արժէք ունեցող աշխատանք:

Օր աւուր աւելի ու աւելի աճում է վարձկան բանուոր կանանց թիւը երկրագործութեան, արհեստների, գործարանների մէջ և առևտրական ձեռնարկութիւններում: Օր աւուր աւելի ու աւելի մեծ քանակութեամբ կիսապահով աղջիկներ ու կանայք

դառնում են հիւանդապահներ, ուսուցչուհիներ, հեղինակներ և այլն։ Ներկայումս ահազին թուով կանայք այլև չեն պարապում միայն ընտանեկան աշխատանքով և երեխաների կրթութեամբ։ վարձու աշխատանքը մեծ տեղ է բռնել կնոջ կեանքի մէջ։ Ֆրանսիայի վերջին, 1896 թ. ժողովրդագրութիւնից երեսում է, որ այստեղ վեց միլիոնից աւելի կանայք վարձու բանուորուհի են և կէս միլիոն—ինքնուրուն ծառայողներ։ Երկուս ու կէս միլիոնից աւելի պարապում են երկրագործութեամբ, մօտ երկու միլիոն—արդիւնագործութեամբ, մի միլիոնից էլ աւելի վաճառականութեամբ և տեղափոխութեան գործերով։ Փոքրիկ Բելգիայում 1896 թ. գործարանային բանուորների ամբողջ մի քառորդը կանայք էին։ Բացի դրանից տնայնագործութեամբ պարապում էին յիսուն հազարից աւելի կանայք։ Ժամանակակից պետութիւնների մէջ երբեմն այնպիսի արդիւնաբերող գործեր կան, ուր կանայք թուով աւելի շատ են, քան տղամարդիկ, ուր վարձկան բանուոր կանայք տղամարդկանցից նոյն իսկ մի քանի անգամ աւելի են։ Այսպէս օրինակ Գերմանիայում շորեր պատրաստելու և կտոր գործելու գործարաններում կանայք աւելի են, քան տղամարդիկ, իսկ Բելգիայում նոյն իսկ երկու անգամ աւելի շատ են։ Ռուսաստանում էլ այդ բանը ուղղակի աչքի է ընկնում։ Կին գեղջկուհին աշխատում է և սեպհական դաշտում հնձի ժամանական դաշտում

նակ, և նա վարձւում է հարևան կալուածատիրոջից, և նոցա մի ահագին թիւ ամառ ժամանակ հեռու, դէպէ Խերսոն, Կախովկա և Կովկաս է գնում, ուր երկրադործական ծանր աշխատանքներ է կատարում։ Իսկ որքան գեղջկուհի կանայք պարապում են տնայնադործութեամբ, ինչքան կանայք քաղաքներում կար ու ձեռվ, լուացքով, գործակատարութեամբ և առետուրով են զբաղւում։ Գործարաններում հազարաւոր կանայք և օրիորդներ են աշխատում։ Մօսժամանակներս լրագրում տպուած էր, որ Պետերբուրգի խոշոր գործարաններից մէկը ուզում է վերջնականապէս արձակել իր տղամարդ բանուորներին և նրանց փոխարինէ կանանց և մանուկների աւելի արժան աշխատանքով։ Իսկ քանի քանի բժշկուհի, վարժուհի, հիւանդապահ, մանկաբարձ կանայք կան մեզնում։ Ո՞ր գիւղացին կամ բանուորը չգիտէ, թէ ինչքան ծանր է նրանց աշխատանքը զեմսկիյ և քաղաքային հիւանդանոցներում և դպրոցներում։ ուր նոքա իրենց բժշկութեամբ և ուսուցումով շատ լոյս և թեթևութիւն են բերում։

Ուրիշ պետութիւններում էլ այդպիսի կանանց թիւը քիչ չէ։ Ամերիկայում կինը աշխատում է և գրասենեակներում, դատարաններում, և ժողովրդական վարժարաններում, և թէ բարձրագոյն դպրոցներում (կին-ուսուանողներ և կին—պրոֆեսոր)։ Կանայք աշխատում են նոյնպէս հիւանդանոցներում և

պատերազմում, (կին—բժշկուհի, հիւանդապահ և գթութեան քոյլ), պօստատանը և հեռագրատանը, գիւղական և քաղաքային վարչութիւններում, իբրև գործարանային տեսչուհի, փաստաբան և պաշտպան. գժուար է նոյն իսկ բոլորը թուել:

Այսպիսով ներկան բոլորովին տարբեր է հին, աւելի խաւար ժամանակներից: Ո՞չ, կինն այժմ տնային ստրկուհի չէ, նա այլ ևս տանը փակուած ճորտ չէ, որ տնից դուրս չկարողանայիւր համար պարապմունք կամ աշխատանք գտնել: Ոչ, նա այժմ տղամարդուն հաւասար չափով մասնակցում է գրեթէ բոլոր գործերին և արհեստներին. ինչպէս աշխատաւոր այր գիւղացին և բանուուրը, նոյնպէս և նա տօթ օրին յոգնում է կալուածատիրոջ խոտ—հարքին, վաղ առաւօտից մինչև ուշ գիշեր նա հանգիստ չունի իր դժուարին աշխատանքի ժամանակ կամ խեղդուկ արհեստանոցում և գործարանում: Նա իր ամբողջ կեանքը մեքենայի մօտ է անցկացնում, աշխատելով յետ չմնալ վարձուաշխատանքի երկաթեայ տիրոջից (մեքենայից): Բայց և այնպէս քաղցր չէ կնոջ կեանքը գիւղական աշխատանք անելիս կամ գործարանային սեղանի մօտ: Նորա աշխատանքի պայմանները աւելի ծանր են, քան տղամարդունը: Զէ որ նորա ոյժն ու ճարպիկութիւնն աւելի քիչ են, և ամեն ինչ անելունա ընդունակ չէ: Նորա վրայ են ծանրանում և տնային գոր-

ծերը, իսկ նա աշխատավարձ աւելի քիչ է ստանում։  
Ժամանակակից աշխատաւոր կինը, դուրս եկած  
ընտանեկան ճորտութիւնից, կարիքից շուկայ ընկած,  
ուր նա ստիպուած է ծախել իր բանուորական ոյժը,  
և տղամարդուն համահաւասար և համարեա նոյն պայ-  
մաններում աշխատել զանազան տնտեսութիւնների  
մէջ, գործարաններում, արհեստանոցներում, և խա-  
նութներում, սովորում է յամառ և կատաղի կռիւ մը-  
ղել իր իրաւունքների համար, իր կեանքը բարելաւե-  
լու, բանուորական օրը կարճացնելու, աշխատավարձը  
մեծացնելու համար, քաղաքական իրաւունքներ,  
խօսքի, խղճի, մամուլի, ժողովների և միութեանց  
ազատութիւն ստանալու համար, որոնք լուսաւորու-  
թեանը խթան են լինելու, աւելացնելու են նրա,  
բանառուր կնոջ գիտակցութիւնը։ Նա կռւում  
է պետութեան կառավարութեանը մասնակցելու  
և այն բանի համար, որպէսզի կանայք էլ նոյն-  
պէս կարողանան ժողովրդական ներկայացուցիչներ  
ընտրել, ինչպէս տղամարդիկ, որպէսզի իրենք էլ կա-  
րողանան ժողովրդական ներկայացուցիչ ընտրուել  
տղամարդոց հաւասարապէս։ Ընտրողական իրաւուն-  
քը կնոջ համար անհրաժեշտ է այն պատճառով, որ  
կին բանուորն էլ իր շահերն ունի, ժամանակակից  
կարգ ու կանոնից նա ևս ճնշւում է, ինչպէս և  
տղամարդը. անհրաժեշտ է այդ իրաւունքը նրան, ո-  
րովհետեւ միմիայն կինը կարող է իր կեանքը

բարելաւել իր իրաւունքների համար մղած կռուից  
յետոյ: Իսկ որպէսզի կարելի լինի այդ գոռ պայքարն  
անել, որը և արդիւնաւէտ, և յաջող լինի, կնոջ հա-  
մար էլ ցանկալի և անհրաժեշտ է ընդհանուր ընտ-  
րողական իրաւունքը:

Նոյն իսկ այժմ, երբ կինը զրկուած է ձայնուու-  
թիւնից, նրանցից շատերը մասնակցում են նախընտ-  
րական պայքարին: Օրինակ Անգլիայում և Գերմա-  
նիայում, նոքա ընկեր—տղամարդոց մէջ շրջում, հա-  
մոզում են, որ նրանք ձայն տան այս կամ այն ժո-  
ղովրդական ներկայացուցչին: Թերթիկներ են բա-  
ժանում, որոնցով ժողովրդական ներկայացուցիչներն  
անում են իրանց խոստումները ժողովրդին: Ընտրու-  
թեան իսկ օրը շատ կանայք մտնում են բանուորնե-  
րի բնակարանները, շրջում են գիւղերը, ընկեր—տղ-  
ամարդոց յիշեցնելու, որ գիւղացին և բանուորը  
չպէտք է նորին, այլ պէտք է շտապեն ընտրութիւն-  
ներին ձայն տալ իր մարդուն կամ իր ներկայա-  
ցուցչին: Ռուսաստանում էլ կանայք պէտք է ընտ-  
րողական իրաւունք ստանան, միայն թէ թող նոքա  
վիտակցեն իրենց իրաւունքները և ոյժը, թող  
շտապեն շարունակել կռուել իրենց իրաւունքների  
համար. ժամանակն ամեն ինչ կանէ. ընդհանուր,  
հաւասար, գաղտնի և ուղղակի ձայնուութիւնը ոչ  
միայն տղամարդու, այլ և կնոջ սեպհականութիւնն  
է լինելու:

Հենց աղքատ գիւղացին և բանուորն են աշխատաւոր դասակարգը:

Ուղիշի աշխատանքը նրանք կարող են յարգել Նրանք աշխատաւոր կնոջ մէջ էլ պէտք է տեսնեն, իրենց գործի ընկերոջը, որի հետ նոքա պէտք է մի ճանապարհով ընթանան և որոնց նոքա պէտք է օժանդակեն կանանց ընտրողական իրաւունքը պահանջելու գործում:

Բանուորի և աղքատ գիւղացու համար կինը թշնամի և չար հակառակորդ չէ, որից վախենալ է հարկաւոր և որին չի կարելի պետութեան մէջ իրաւունքներ տալ:

Ընդհակառակը աղքատ գիւղացու և բանուորի համար կինը մի ցանկալի ընկեր է, հաւասար իրաւունքների տէր մի աշխատաւոր: Ինչքան գիտակցող է կինը, ինչքան նա ինքն է ուժեղ կուում, ինչքան աւելի ժամանակ է նեցուկ լինում իր ամուսնուն, հօրը կամ որդուն, այնքան էլ մօտալուտ է ընդհանուր յաջողութիւնը: Ամեն մի գիտակից բանւոր և ամեն մի գիւղացի պէտք է պահանջէ կանանց ընտրողական իրաւունքը...



Պահիստը գտնւում է Թիֆլիս «ՓԱՐՈՍ» գրախանթ.





Հ Տ Տ Տ  
Տ Տ Տ Տ Տ

Ե  
Ե Ե Ե  
Ե Ե Ե

ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



EL 0013813

A II  
12512